ՍՊԱՀԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ՝ ԻՐԱՆԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ

ԱՐԻՍ ՇԱՀԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ

Համառոտ

Սուրբ Ամենափրկիչ վանքը կամ, ինչպես հայտնի է՝ Վանք եկեղեցին, համարվում է Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հայկական եկեղեցին և Նոր Ջուղայի ամենահին և ամենահայտնի կառույցներից մեկը: Այն գտնվում է Սպահանում, հայկական Նոր Ջուղա թաղամասում: Հիմնադրվել է Սպահանի Մեծ մեյդան թաղամասում կառուցված առաջին փոքր եկեղեցու հիմքի վրա (Սուրբ Հակոբ. 1606-1607 թթ.) 1955-1964 թվականների ընթացքում: Այնուհետև, եկեղեցամերձ տարածքն ընդլայնվում է և ժամանակի ընթացքում վերածվում խոշոր վանական համալիրի՝ հարակից կառույցների ձևագոյացման արդյունքում, այդ թվում՝ միաբանության շենքը, գրադարանի ու թանգարանի կառույցը, որոնք վեր են խոյանում վանական համալիրի բակում:

Եկեղեցին արտաքին հարդարանքում ունի պարզ, բացառապես հարթ և աղյուսակերտ պատեր՝ համեմատած իր ներսույթի պերճաշուք հարդարանքի՝ փառահեղ որմնանկարչության հետ: Հարկ է նշել, որ ամբողջովին աղյուսաշեն եկեղեցու արտաքին ճարտարապետությունը պարսկառճ է. այսինքն՝ այս ճարտարապետական կոթողում համադրված են հայկական ու պարսկական ճարտարապետական էլեմենտները: Ինտերիերի որմնանկարները բազմաթեմա են՝ վերցրած Նոր և Հին Կտակարաններից: Թեմատիկ բազմաֆիգուր հորինվածքները շրջապատված են համատարած զարդանկարներով՝ պարսկականից փոխառնված տարրերով:

Բանալի բառեր. *Սպահան քաղաք, Նոր Ջուղա, Սուրբ Ամենափրկիչ վանք, վանական համալիր, իրանահայ համայնք, ճարտարապետական հորինվածք, ներսույթ, որմնանկարներ, իրանա-հայկական արվեստ, գլուխգործոց:*

Հայտնի է, որ հայկական գաղթօջախի գոյությունը Իրանի Իսլամական Հանրապետությունում ունի դարավոր պատմություն, և այն առաջին հերթին կապված է Շահ Աբասի կազմակերպած մեծ բռնագաղթի հետ (1604-1605 թթ.), որի հետևանքով Իրանի տարածքում

գոյացան հայկական թաղամասեր՝ իրենց յուրահատուկ միջավայրով ու կոլորիտով, ուր բարձր զարգացման հասան ինչպես բնակելի, այնպես էլ եկեղեցական ճարտարապետությունը, որմնանկարչությունն ու մանրանկարչությունը և այլ արվեստներ ու արհեստներ:

Այսպիսով, Իրանում գտնվող ամենակարևոր հայկական մշակութային օջախներից մեկը փոված է Ջայանդերուդ գետի ափին՝ Սպահան քաղաքում: 17-18-րդ դդ. Սպահանում ձևավորված հայկական թաղամասում, որ կրում էր Նոր Ջուղա անունը, կառուցվում են հոյակերտ բնակելի շինություններ՝ կամարակապ ու նախշազարդված, տասնյակ եկեղեցիներ, որոնց մի մասն ավերվել է տարբեր պատճառներով, իսկ ոմանք գործում են ցայսօր:

Եկեղեցիները հիմնականում կառուցվում էին երեք տիպի. քառամույթ բազիլիկայի հորինվածքով, գմբեթավոր դահլիճով, ամառային բաց աբսիդով (կապված Սպահանի խիստ շոգ կլիմայի հետ): Բոլոր եկեղեցիները հիմնականում ունեին ներսից հնգանիստ աբսիդ, երկու կողմերում՝ ուղղանկյուն սենյակներ-ավանդատներ: Տեղադրության, շինանյութի, ծավալային լուծման, ներսույթի ձևավորման և այլ առումներով Նոր Ջուղայի եկեղեցիներն առանձնանում են հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ: Դրանք կառուցվում էին աղյուսով՝ կրելով 17-րդ դարի իրանական շինարարական արվեստի մեծ ազդեցությունը, որ արտահայտվում էր ինչպես առանձին կոնստրուկցիաներում, այնպես էլ՝ շենքերի հորինվածքային կերպարում ու ձևավորման մեջ[1]:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ Իրանում կառուցված հայկական եկեղեցիները, ինչպես ճարտարապետական կերպարի ու ոճային առանձնահատկությունների, այնպես էլ՝ արվեստի ու նկարչության տեսանկյունից, գեղարվեստական մեծ արժեք ունեն և մեծապես տարբերվում են այլ գաղթօջախներում կառուցված հայկական եկեղեցական ճարտարապետության օրինակներից: Դրանք հիմնականում կառուցվում էին խիտ բնակեցված թաղամասերում, եզերվում պարսպապատով: Նրանց զանգակատները կառուցվել էն ավելի ուշ, սկսած 18-րդ դարից, իսկ մինչ այդ զանգերի փոխարեն կիրառվում էին կոչնակները:

Սպահանում իր հորինվածքային ու գեղարվեստական առանձնահատկություններով առանձնանում է Սուրբ Ամենափրկիչ վանքը (վանական համալիր) (նկ. 1), որը համարվում է Իրանի գլխավոր

1 Մինասյան, Լ. Գ., Իրանի հայկական եկեղեցիները (ընդհանուր ակնարկ), Նոր Ջուղա, 1983, էջ 87:

հայկական եկեղեցական շինությունը ու Նոր Ջուղայի ամենահին և ամենահայտնի կառույցներից մեկը, և ներկայումս հանդիսանում է զբոսաշրջության խոշոր այցելավայր:

Ուշարժան է այս հսկայածավալ վանական համալիրի հիմնադրման պատմությունը: Վանքը ձևավորվել է 1655-1664 թթ. ընթացքին՝ Սպահանի Մեծ մեյդան (հրապարակ) թաղամասում: Սպահանի Սուրբ Ամենափրկիչ վանական համալիրի մայր տաճարը՝ Սբ. Հովսեփ Արիմաթեցի եկեղեցին, հիմնադրվել է 1606-ին[1]: Այնուհետև, շուրջ հիսուն տարի անց, հարակից կառույցների ձևագոյացման արդյունքում, եկեղեցամերձ տարածքն ընդլայնվել և ժամանակի ընթացքում վերածվել է խոշոր վանական համալիրի[2]:

Պատմական տարբեր ժամանակաշրջանների կնիքը կարելի է տեսնել վանքի արտաքին և ներքին ճարտարապետական մշակման, համալիրի շինությունների կառուցապատման ու ոճային համադրություններում: Վանական համալիրը կազմող շինությունների կառուցողական աշխատանքները սկսվել են 1606-ին և ավարտին հասցվել 1655-1664 թթ.՝ ժամանակի ընթացքում ենթարկվելով նախագծային և հորինվածքային մի շարք փոփոխությունների:

Գլխավոր եկեղեցին մեկ զույգ հզոր մույթերով, գմբեթավոր դահլիճային տիպի է, ներսից՝ հնգանիստ խորանով, դրսից՝ պարսպապատված, մեծ նմանությամբ իրանական մզկիթի, թեև արևմտյան եկեղեցաշինության մեջ սովորաբար հանդիպող կիսաութանկյունաձև ապսիդով: Գմբեթը կրկնակի է. ներքին կիսագնդաձև, արտաքին՝ ձվաձև: Մզկիթի նմանությամբ ճարտարապետական այս լուծումը հանդիպում է միայն Նոր Ջուղայի եկեղեցական շինարվեստում: Եկեղեցին արտաքին հարդարանքում ունի պարզ, բացառապես հարթ և աղյուսակերտ պատեր՝ համեմատած իր ներսույթի պերճաշուք հարդարանքի՝ ի դեմս վերջինիս փառահեղ որմնանկարչության: Այսպիսով, հարկ է նշել, որ ամբողջովին աղյուսաշեն եկեղեցու արտաքին ճարտարապետությունը պարսկառճ է (նկ. 2):

---

1 50 տարի յետոյ, 1655 թւականին, երբ քաղաքամիջի հայերն եւս Սպահանից դուրս գալով բնակութիւն են հաստատում Հին Ջուղայի արեւմտեան կողմում՝ Նոր Ջուղայում, Դաւիթ Առաջնորդի օրերում, դրա տեղ կառուցւում է ներկայի փառաւոր եկեղեցին, որն աւարտւում է ինն տարւայ ընթացքում՝ 1664 թւականին: Այս մասին արեւմտեան՝ Յարութեան դռան վերեւում յախճապակու վրայ գրւած է համապատասխան մի յիշատակարան//Սպահանի հայոց թեմ. http://www.norjugha.ir/

2 Blow, D., Shah Abbas: the ruthless king, who became an Iranian legend, I.B. Tauris, University of Michigan, p. 200

Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմտյան ու հարավային կողմերում: Եկեղեցու արևմտյան կողմում 1702թ. կառուցվել է միջին բարձրություն ունեցող կամարակապ, երկհարկ, գմբեթավոր զանգակատունը՝ չորս զանգերով[1]: Հետագայում՝ 1860-1865 թթ., եկեղեցու հարավային կողմում կառուցվել է նոր երկհարկ զանգակատուն՝ առաջնորդարանի շինության տեղում:

Եկեղեցում առկա է պատարագների մատուցման խորան, ուր ամփոփված են երկու երախտավորների՝ Դավիթ Առաջինի և Խաչատուր Կեսարացու (վանահայր 1620-1646 թթ.) շիրիմները[2]: Վանական համալիրն ունի ընդարձակ բակ, որտեղ առկա են գերեզմաններ, որոնք տեղակայված են մուտքին նախորդող արտաքին պատի երկայնքով և որոնց վրա արված են հայերեն արձանագրություններ: Եկեղեցու մուտքը սալիկապատված է, կրում է հայերեն արձանագրություն:

Տաճարի բակի մի անկյունում սենյակներ և սրահներ են կառուցված՝ հյուրերի ընդունելության համար: Միաբանների խցերը դասավորված են հյուսիսային կողմում, իսկ հարավայինում տեղակայված են սեղանատունն ու տպագրատունը: Գավթի արևելյան կողմում առկա է մի ուղղաձիգ սալահատակ շինություն: Սուրբ սեղանը կամարաշեն է և ունի ներքնահարկ: Սեղանի շուրթերը պատրաստված են հախճապակուց: Վանքի պատերին 1710-1716 թթ. տեղադրվել են հախճասալեր:

Սուրբ Ամենափրկիչ վանքին կից գործել է դպրոց, որտեղ ուսանողներին սովորեցրել են եվրոպական լեզուներ և վաճառականության արհեստ[3]:

Եկեղեցուն կից կառուցվել է նաև միաբանության շենքը: Տաճարի դիմաց՝ բակում, վեր է խոյանում վանքի գրադարանը, գրատունն ու թանգարանը ներառող շենքը, որի պատերին փորագրված են աստվածաշնչյան տեսարաններ: Վանքի գրադարանում պահվում է շուրջ 700 ձեռագիր (ինչպես հայկական, այնպես էլ՝ միջնադարյան եվրոպական), հազվագյուտ աղբյուրագիտական նյութեր, իսկ թանգարանում՝ տարբեր տեսակի եզակի ու արժեքավոր իրերի

1 Մինասյան, Լ.Գ., Պապյան, Կորյուն եպիսկոպոս, Դիվան Սուրբ Ամենափրկիչ վանքի: 1609-1960 (Արխիվի ուղեցույց գրքույկ), Նոր Ջուղա, 1983, էջ 98

2 Խաչատուր Կեսարացին հիմնադրել է Վանքի տպարանը, որն առաջինն է Իրանում և Մերձավոր Արևելքում:

3 Ավագյան, Լ., Նոր Ջուղայի հայկական եկեղեցիները, Էջմիածին (Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի), ԾՁ տարի, 2000 (նոյեմբեր), էջ 93

հավաքածուներ: 1871 թ. կառուցված թանգարանը տաճարի և Սպահանի հայ համայնքի պատմության բազմաթիվ վկայություններ է պարունակում՝ ներառյալ 1606 թ. Շահ Աբաս Ա-ի՝ Նոր Ջուղայի կառուցման հրամանագիրը: Թանգարանի շլացնող հավաքածուի մասն են կազմում նրբագեղ Աստվածաշունչները:

Հարկ է նշել, որ հետագայում բակի մի անկյունում կանգնեցվել է 1915 թ. Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող: Իսկ 1931 թ. վանքի արևմտյան մուտքի վրա կառուցվել է ժամացույցով եռահարկ աշտարակը:

Ամենափրկիչ վանքի եկեղեցու շինությունից հետո ոչ մի տեղեկություն չկա նրա ամբողջական վերանորոգման մասին: Հիշատակություն կա, որ Թորոս Սրբազան եպիսկոպոսի ժամանակ տեղի են ունեցել մեծամեծ նորոգություններ[1]. և այն, որ 1854 թ. նորոգվել է վանքի պարիսպը: Հայտնի է նաև, որ եկեղեցին կտակների ու նվիրատվությունների արդյունքում տիրապետել է կալվածքների, տների, խանութների, այգիների ու հողերի[2]:

Հովսեփ Արիմաթեցի եկեղեցու գլխավոր առանձնահատկությունը վերջինիս ներսույթի նախշազարդումն է՝ ի դեմս հոյակերտ որմնանկարների:

Հայտնի է, որ որմնանկարչությունը հայ արվեստի հնագույն և ինքնատիպ բնագավառներից է, որն անքակտելիորեն կապված է ճարտարապետության հետ: Իր յուրատիպությամբ մասնավորապես նշանակալից է հայկական միջնադարյան որմնանկարչությունը, որի առավել կամ պակաս չափով պահպանված օրինակները կարելի է տեսնել ինչպես ներկայիս Հայաստանի, այնպես և մեր պատմական հայրենիքի տարածքում առկա ճարտարապետական կոթողներում, նաև՝ հայկական հին ու նոր մի շարք գաղթավայրերում: Այն առանձնահատուկ կերպով դրսևորվել է նաև Իրանի տարածքում գտնվող մի շարք եկեղեցական շինությունների ներսույթում: Այս տեսանկյունից գլուխգործոց են համարվում Սպահանի Սուրբ Ամենափրկիչ վանքի եկեղեցու որմնանկարները, որոնք բազմաթեմա են՝ վերցված Հին և Նոր Կտակարաններից (նկ. 3, գուն. պտկ. 5, 6):

Թեմատիկ բազմաֆիգուր հորինվածքները շրջապատված են համատարած զարդանկարներով՝ իրականից փոխառնված

1 Սարգսյան, Լ.Ա., Սահակյան, Ա.Ա. խմբագրությամբ, Մովսես Ջուղայեցի. Ծաղկանց բուրաստան, ԵՊՀ աստվածաբանության ֆակ.,Երևան, 2010, էջ 8

2 Նույն տեղում, էջ 99

տարրերով: Պատկերազարդումները կատարվել են ժամանակի այնպիսի հայտնի նկարիչների կողմից, ինչպիսիք էին Հովհաննես Միքուզը, Հայր Ստեփանոսն ու վարպետ Մինասը[1]:

Դատելով որմնանկարների ուսումնասիրությունից, նշենք, որ եկեղեցու ներսույթը ծածկված է հիասքանչ ու շքեղ հարդարանքով՝ կազմված հախճասալերի ու որմնանկարների զուգադրությամբ. ոսկեգույն փորագրություններով, հարուստ ու բազմազան հախճասալե աշխատանքներով: Նրբագույն կապույտով ու ոսկեգույնով ներկված կենտրոնական գմբեթը նկարագրում է աշխարհի արարման աստվածաշնչյան պատմությունը և եդեմից մարդու արտաքսումը:

Եկեղեցու ներսում պատերի ստորին մասը 1710 թ., իսկ խորանը՝ 1716 թ. ամբողջապես ծածկվել են բուսական զարդամոտիվներով, հրեշտակների պատկերներով, կապույտի ու ոսկեգույնի գերակշռությամբ նկարազարդված հախճասալերով[2]:

Այսպիսով, որմնանկարները ծածկում են եկեղեցու ողջ ներսույթը՝ իրենց ինքնատիպությամբ համադրելով հայկական մանրանկարչության, արևմտաեվրոպական դասական հաստոցային գեղանկարչության և տպագիր գրքերի նկարազարդման, ինչպես նաև իրանական դեկորատիվ արվեստի սկզբունքները: Բացի այդ, որմնանկարների հորինվածքներում նկատելի են Եվրոպայից ներմուծված գեղանկարչական աշխատանքներ ու գրաֆիկական նկարներ:

Ամփոփելով, հարկ է փաստել, որ իրանական և հայկական ճարտարապետության այսպիսի սինթեզը, երբ եկեղեցական շինության հայկական ավանդական հատակագծային հորինվածքը զուգորդվում է մզկիթային շինությանը բնորոշ ծավալային ձևերի հետ, իսկ հարդարանքում համատեղվում են ուշ միջնադարյան իրանական դեկորատիվ արվեստի, ինչպես նաև հայկական մանրանկարչության ազդեցությամբ արված որմնանկարների ու եվրոպական կերպարվեստի տարրերի հետ, բացառիկ են դարձնում ուսումնասիրվող վանական համալիրի եկեղեցին ինչպես ճարտարապետական, այնպես էլ՝ ընդհանրապես գեղարվեստական կատարման տեսանկյունից:

1 Նույն տեղում, էջ 101

2 Երեմյան, Ա. Գ., Նոր Ջուղայի ԺԷ դարու որմնանկարչական հուշարձանները, Ա. հ., Նյու Յորք, 1942, էջ 103

SUMMARY

The Holy Savior Cathedral as a Masterpiece of Iranian-Armenian art

Aris Shahdaryan

The Holy Savior monastery or, as it is known, the "Vank" cathedral is considered to be the chief Armenian church of the Islamic Republic of Iran and one of the oldest and most famous church buildings in New Jugha. It is located in the city Isfahan; in the Armenian New Jugha district. It was founded on the basis of the first small church built in Great Meydan district of Isfahan (St. Hakob: 1606-1607) during 1955-1964. Later, the surrounding territory of the cathedral was expanded, and during the time it turned into the monastery complex as a result of the formation of the constructions, including the buildings of the congregation, the library and the museum, i.e., which stood in the yard of the monastic complex. The church has simple, exceptionally smooth and brick-made walls in its exterior, compared with its splendid interior and wonderful frescoes.

Thus, it is worth mentioning that the entirely brick-made external architecture of the cathedral is done with Iranian style; that is, the Armenian and Iranian architectural elements are combined in this architectural monument. Here the interior frescoes are multi-themed and taken from the New and Old Testaments. Thematic multi-figure compositions are surrounded by ubiquitous ornaments, with Iranian elements.

Key words: *the city of Isfahan, New Julfa, the Holy Savior Cathedral, the monastery complex, Iranian-Armenian community, architectural creation, interior, frescoes, Iranian-Armenian art, masterpiece.*

РЕЗЮМЕ

Собор св. Всеспасителя в Исфахане как шедевр ирано-армянского искусства

Арис Шахдарян

Собор Святого Христа Всеспасителя также известный как "Ванкский" собор — считается главной армянской церковью Иранской Исламской Республики и одним из старинных и известных строений в Новой Джуге. Он расположен в городе Исфахан, в армянском квартале Новая Джульфа и построен в 1955-1964 гг. на фундаменте первой маленькой церкви (св. Акоп, 1606-1607гг.) в районе Большой Мейдан Исфахана.

Вскоре территория церкви расширяется и со временем превращается в большой монастырский комплекс: в результате формирования смежных построек, в том числе здания Конгрегации, строений библиотеки и музея, которые включены во двор монастырского комплекса.

Внешний декор Церкви имеет простой вид: исключительно гладкие и кирпичные стены по сравнению с его внутренним роскошным интерьером с великолепными фресками. Следует отметить, что внешняя полностью кирпичная архитектура церкви, исполнена в иранском стиле: в этом архитектурном шедевре объединены армянские и персидские архитектурные элементы.

Темы фресок интерьера взяты из Нового и Ветхого Завета. Тематические многослойные композиции повсюду обрамлены орнаментом с заимствованными персидскими элементами.

Ключевые слова: *город Исфахан, Новая Джуга, Собор св. Всеспасителя, монастырский комплекс, ирано-армянская община, архитектурная композиция, внутренний интерьер, фрески, иранское искусство, шедевр.*

1



2



3

1. Սուրբ Ամենափրկիչ վանքը Նոր Ջուղայում (Սպահան Իրան):
2. Նոր Ջուղա. Սուրբ Ամենափրկիչ վանք. Հովսեփ Արիմաթեցի եկեղեցու գլխավոր ճակատը:
3. Նոր Ջուղա. Սուրբ Ամենափրկիչ վանք. Հովսեփ Արիմաթեցի եկեղեցու ներսույթը՝ խորանով: